ԵԱՀԿ երևանյան գրասենյակը Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամի հետ համատեղ
հրավիրում է Ձեզ մասնակցելու

Կազմակերպական զարգացման
Դասընթացին

Նկարագրություն

Դասընթացը նախատեսված է ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների ղեկավարների և երիտասարդական թևի ներկայացուցիչների համար (յուրաքանչյուր կազմակերպությունից մինչև երկու ներկայացուցիչ), ովքեր ցանկանում են բարելավել իրենց կազմակերպական զարգացման կարողություններն ու հմտությունները:

Դասընթացի ընթացքում մասնակիցները կծանոթանան հետևյալ թեմաների հետ.

- Կազմակերպական զարգացման հիմունքներ
- Ծրագրերի մշակում և իրականացում
- Ֆինանսական կայունության պլանավորում
- Սոցիալական ձեռնարկատիրություն
- Ֆոնդահայթայթում
- Համայնքային զարգացում

Դասընթացի մասնակիցներին կտրամադրվեն մասնակցության հավաստագրեր:

Տևողությունը և վայրը

Դասընթացը տեղի կունենա **մայիսի 31-ին և հունիսի 1-ին, և կշարունակվի հունիսի 6-8-ը, ժամը 10.00-17.00-ը (5 օր տևողությամբ),** ք. Երևան:

Դասընթացի լեզուն հայերենն է՝ հայերեն-ռուսերեն համաժամանակյա թարգմանությամբ: Այն մասնակիցները, ովքեր կցանկանան օգտվել թարգմանությունից, խնդրում ենք գրանցման ձևի համապատասխան պարբերությունում նշում կատարել: Դասընթացի ընթացքում նախատեսված են ճաշի և սուրճի ընդմիջումներ:

Մասնակցություն և գրանցում

Դասընթացին մասնակցելու համար խնդրում ենք լրացնել և ուղարկել կից ներառված հայտը training@cdpf.am էլեկտրոնային հասցեով կամ ուղարկել/ներկայացնել ԵԱՀԿ երևանյան գրասենյակ՝ ք. Երևան, Սունդուկյան փ. 64/1 **մինչև մայիսի 20-ը**:

Երիտասարդական թևի ներկայացուցիչների հայտերը պետք է ուղեկցվեն կազմակերպության ղեկավարի աջակցող նամակով:

Դասընթացի մասնակիցների թիվը սահմանափակ է և հայտերի մեծ քանակի դեպքում առաջնությունը կտրվի վաղ և ամբողջական հայտ ներկայացնողներին: Բոլոր դիմողները կտեղեկացվեն իրենց մասնակցության հաստատման և դասընթացի վայրի մասին մինչև մայիսի 29-ը:

Հարցերի դեպքում կարող եք դիմել ԵԱՀԿ երևանյան գրասենյակ՝ հեռ./ֆաքս +374 10 229610/11/12/13/14, ներք. 5452 (Ինևա Երանոսյանին):